Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 05 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը 2009թ. հունվարի 16-ին (մտից թիվ 4-7) դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի «ժդ» կետով սահմանված «դիմողները՝ ընտրելու եւ (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով» դրույթի սահմանադրականությունը:

Դիմողը միջնորդել է նաեւ վերոհիշյալ դիմումի ընդունման հարցը քննելիս հիմք ընդունել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի «ժդ» կետի դրույթները (այսինքն՝ իր իսկ կողմից վիճարկվող) եւ ազատել իրեն պետական տուրք վճարելու պարտականությունից:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի համաձայն այդ օրենքի 69 հոդվածում նշված գործերով դիմողը պարտավոր է սահմանադրական դատարան ներկայացնել նաեւ օրենքով սահմանված չափով պետական տուրք (բազային պետական տուրքի հնգապատիկի չափով) վճարելու վերաբերյալ անդորրագիր կամ միջնորդություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին: Տվյալ դեպքում դիմողը պետական տուրք վճարելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ 27 հոդվածի 3-րդ մասում նախատեսված իր պարտականությունը չկատարելը փաստարկում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի «ժդ» կետում նախատեսված արտոնությամբ:

3. Դատարաններում պետական տուրքի վճարման արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածում, որի «ժդ» կետը, ինչը վկայակոչում է դիմումատուն, նախատեսում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատում՝ <u>ընտրելու եւ (կամ) ընտրվելու իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով</u>:

Սահմանադրական դատարան հասցեագրած իր դիմումով քաղ. Ռ.Թորոսյանը բարձրացնում է <u>օրենքի դրույթի սահմանադրականության հարց</u> (ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետ) որպիսի գործերով «Պետական տուրքի մասին» ՀՀ օ-

րենքի 22 հոդվածի հիմքով պետական փուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

4. Ելնելով վերոշարադրյալից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 29 եւ 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով, ՀՀ ՍԴ 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չբավարարել պետական փուրք վճարելուց ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը եւ նրա դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ